
ԲՈՒԴԱՊԵՇՏԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՂՈԹԱՐԱՆ–ԵԿԵՂԵՑՈՒ
ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՍՊԱՍՔԻ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՒԴԱՆՅԱՆ

Հայերի՝ Բուդապեշտում հաստատվելու մասին ստույգ վկայություններ մեզ չեն հասել, բայց այն, որ արդեն XV դարում այստեղ հայեր են հիշատակվում [Էդրմեն Մարտին՝ 1415 թ., դատավոր Էդրմեն Բշտվան (Ստեփանոս)՝ 1462 թ.], անվիճելի է՝ Նրանց թիվն աճել է հատկապես XX դարասկզբին՝ պայմանավորված նախ Մեծ եղեռնի հետևանքով այստեղ գաղթած հայերով, ապա Տրանսիլվանիայի՝ 1921 թ. Տրիանոնի խաղաղության դաշինքի հիմամբ՝ Ռումինիային միանալու փաստով¹, երբ տեղի բազմաթիվ հայեր տեղափոխվեցին ու բնակություն հաստատեցին Բուդապեշտում:

Հիշյալ ժամանակաշրջանում Բուդապեշտի հայ համայնքը, կապ հաստատելով Վենետիկի Մխիթարյանների հետ, Հայր Աթանաս Տիրոյանի աջակցությամբ Բուդապեշտում ձեռք է բերել մասնավոր հողատարածք՝ հիմնելով նախ քահանայատուն (1922 թ.), ապա՝ մատուռ (1924 թ.): 1925 թ. նոյեմբերին պաշտոնապես հաստատվում է շուրջ 300 հետևորդ ունեցող հայ կաթոլիկ եկեղեցին: Բուդապեշտի տարբեր թաղամասերում (Բաթոր փ. թիվ 19, Վադաս փ. թիվ 6, Տելեկի Պալ փ. թիվ 6, Սեմելվեյս փ. թիվ 9) ժամանակավոր գործելուց հետո՝ հայ կաթոլիկ թեմը հաստատվում է Օրլայ փ. թիվ 6 հասցեում գտնվող եռահարկ մի շինությունում, ուր հիմնում են մատուռ, աղոթարան ու գրասենյակներ², իսկ վերնահարկը համայնքի առաջնորդ Հայր Դանիել Կադարի (1916–1988) հոգածությամբ 1974 թ. վերածվել է թանգարանի (նկ. 1)³: Այս սրահում տեղ է գտել՝ մոտավորապես

¹ Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 2, Երևան, 1976, էջ 583:

² Տե՛ս Ֆելիքս Ալեքսիք. Հայերը Հունգարիոյ մէջ. – «Բազմավեպ», 1947, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 235, 238, նաև՝ Ա. Գ. Աբրահամյան. Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964, էջ 350, հ. Բ, Երևան, 1967, էջ 142:

³ Péter Pál Kránitz. The New Homeland. Armenian Refugees in Hungary after the Armenian Genocide, Far Away from Mount Ararat. Armenian Culture in the Carpathian Basin, Joint exhibition of the Budapest History Museum and the National Széchényi Library 5 April to 15 September, 2013, p. 107.

⁴ Եռահարկ շինության առաջին հարկում ստեղծված ու Աստվածածին աղոթարան-եկեղեցու ներքին հարդարանքի ձևավորման գործը դեռևս 1973 թ. ստանձնել է ճարտարապետ Շանդոր Ագբեյը: Շենքի առաջին հարկի անկյունային մասից առանձին մուտք է բացվում դեպի Մայր Դղորոսա մատուռը, որտեղ այժմ են ընկնում մարմարե

նախորդ դարի երկրորդ կեսին գոյացած հնագիտական, պատմագիտական ու ազգագրական կարևոր նշանակության եկեղեցական ու կենցաղային իրերի հավաքածուն⁵: Դրանք առավելապես անագապատված (կլայեկած) պղնձից ու կավից պատրաստված սպասքի (պնակ, անոթ, սափոր, բուրվառ, մոմակալ⁶ և այլն), հոգևորականների հանդերձանքի, գորգերի, դրամների, հնատիպ ու նոր գրքերի, հիմնականում XIX դարի տարաբնույթ գրագրությունների նմուշներ են, որոնք մի ամբողջության մեջ՝ հայրենիքից հեռու, ստեղծում են հայկական ուրույն ու ինքնատիպ «միջավայր»:

Պղնձյա պնակների ցուցանմուշների մեկ տասնյակից ավելին արձանագիր են, ունեն համառոտ հիշատակագրություններ, հաճախ նաև թվագրված են, որոշներն էլ՝ մակագրություններից զատ կրում են նաև զարդանախշեր: Դրանք ժամանակագրորեն թեպետ շատ հին չեն, բայց մեծապես կարևորվում են իբրև գաղթավայրերում պահպանված հայ արվեստի յուրօրինակ «վկաներ»:

քառասյուն խորանի վրա դրված խաչյալ Քրիստոսի ու Ս. Մարիամ Աստվածածնի արձանաքանդակները: Աղոթարանը, որի ոսկեզօծ դուռն ինքնատիպ է չորս ավետարանիչների խորհրդանիշներով, գտնվում է հիշյալ մատուռի հարևանությամբ: Ավագ խորանի կենտրոնում Ս. Մարիամ Աստվածածնի սրբապատկերն է, որի երկու կողմում պատկերված են հին հայկական եկեղեցիներ. աջից՝ Այրիվանքը կամ Գեղարդավանքը, ձախից՝ Անիի Առաքելոց եկեղեցին: Երկրորդ հարկում կառույցն ունի մի քանի սրահ. պատերին առկա են ճոխ հարդարանքով ու հայերեն նոր արձանագրություններով հուշատախտակներ (Աղոթարանի վերաբերյալ տեղեկությունները վերցրել ենք Budapesti templomai 3jibuda. XI.ker3let, Budapesti Vnrosvndo Egyes3let Templomt3rtnetisorozat XIII, by Fabg Benta, Kovncs Mnria, Mayer Lnslg, Mayernn Lendvny Mnria, Rosch Gnbor, Sznkely Imre, Budapest, 2014, p. 120):

⁵ Budapesti templomai 3jibuda. XI.ker3let, Budapesti Vnrosvndo Egyes3let Templomt3rtnetisorozat XIII, էջ 120:

Հունգար արվեստաբան Պալ Էմեշեն հրատարակության է պատրաստում «A Budapesti 3rmeny katolikus lelk3szsng muzeanlis gy3jtemmnye 3 (Բուդապեշտի հայ կաթոլիկ եկեղեցու թանգարանային հավաքածուն) խորագրով հողված, ուր անդրադառնալով թանգարանի հավաքածուին՝ նշում է, որ այն պարունակում է եկեղեցական (զգեստներ, ծխական առարկաներ, հնատիպ հրատարակություններ, սրբապատկերներ) ու կենցաղային (մետաղյա ու կավե սպասք, կահույք, ասեղնագործ աշխատանքներ) բազմաթիվ իրեր, որը համալրվել է հիմնականում նվիրատվությունների, ժառանգարար փոխանցման միջոցով՝ սկսած եկեղեցու հիմնադրումից (նվիրատուներ՝ Հանկո Էլեմերենե, Պելեր Աննա, Դոբակ Ֆերենչենե, Ցարան, Մարտոնֆ ընտանիքները, Պետուլ Մարտոն և այլք): 1972 և 1977 թթ. Հայաստան կատարած իր երկու ուղևորությունների ընթացքում թանգարանի հիմնադիր Հայր Դանիելը ձեռք է բերել նոր իրեր, որոնք փոխադրել է Հունգարիա՝ հարստացնելով հավաքածուն:

⁶ Մոմակալներից մեկի բռնակին առկա է փորագիր 1882 թվականը և «Հ» գիրը. վերջինս, հավանաբար, պատրաստող վարպետի անվան սկզբնատառն է:

⁷ Մեր երախտագիտությունն ենք հայտնում 2015 թ. թանգարանում ուսումնասիրություններ կատարելիս իրենց մասնագիտական ու անձնական աջակցությունը ցուցաբերած Հունգարիայի խորհրդարանում հայ փոքրամասնության

Քննության ենթակա մակագրությունները փորձել ենք ներկայացնել ժամանակագրական կարգով՝ հերթական համարակալմամբ. դրանք ուղեկցվում են գրչանկարներով՝ ու նկարներով, կից տրվում են նաև սպասքի պիտակին առկա գույքահամարը, տրամագիծը, երբեմն էլ՝ լրացուցիչ ծանոթագրություն տվյալ հիշատակագրության վերաբերյալ:

1. Պղնձյա պնակ (դեղնավուն փայլով), Հ^ր 07. 506, RSz. 186, տրամ.՝ 31 սմ, ներսի թեք մակերեսին՝ շրջանի մեջ, 4 տող, էլնդատառ.



ՄԱՀ[ՏԵՍ]Ի ՍԸ/ԱՊ, ԹՎ[ԻՆ]ՌՃ/ՁԸ. (1739):


Նկ. 2

Հիշատակված «Սրապ»-ը ծագումով հունական «Սրապիոն» արական անձնանվան կրճատ ձևն է՝: «Մահտեսի» տերմինը, որն ուշ շրջանի հիշատակագրություններում հաճախ գործածվում է իբրև մակդիր՝ հատուկ անունից առաջ, բնորոշում է Երուսաղեմում Տիրոջ գերեզմանին ուխտի գնացածին. հանդիպում է նաև հաջի, մղդեսի, մղդսի, մուխսի բառաձևերով՝:

2. Պղնձյա պնակ, Հ^ր 07. 502, RSz. 190, տրամ.՝ 22 սմ, ներսի թեք մակերեսին առկա է միատող հակիրճ գրություն, ձվածիր շրջանի մեջ եռատող էլնդատառ մակագրություն կա նաև պնակի հակառակ կողմում.



ա



բ

ՄԱՀ[ՏԵՍ]Ի / ՍՈՒՔԻԱՍ / ՌՃՂԸ. (1749):

ՍԲ ՁԽ[ԱՉԱ]Տ[Ա]Կ

Նկ. 3 ա, բ

խոսնակ Թամաշ Տուրքյանին, թանգարանի աշխատակիցներ պրն. Դիրան Անթալ Ջաքարիասին, Քրիստիան Նադյին, Քրիստիան Բվրե Դավիդին, Տրանսիլվանիայի հայերի մշակութային միության նախագահ տկն. Շարոլթա Բշշեկուցին և մեր լավ բարեկամ Ադամ Բանախին:

⁸ Մակագրությունների գրչանկարները՝ Ա. Հարությունյանի:

⁹ Տե՛ս Հ.ր. Աճ ա ո յ ա ն. Հայոց անձնանունների բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Դ, Երևան, 1948, էջ 679–680:

¹⁰ Տե՛ս Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), կազմեց՝ Ստ. Մալխասեանց, հ. երրորդ, Երևան, 1944, էջ 243:

«Ձիաչատակ» բառը պայմանական ենք վերծանել, թերևս, պնակի վրա խաչ է դրվել:

3. Պղնձյա պնակ, Հ^մ 07. 505, RSz. 189, տրամ.՝ 30 սմ, ներսի թեք մակերեսին՝ ձվածիր շրջանի մեջ, 4 տող, ելնդատառ.



ՄԱՀ[ՏԵՍ]Ի ՄԵԾ/ԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ /
ՅԱԲԻՏ/ԱՍ, 1173 (1759/60):

Նկ. 4

Մակագրության մեջ հիշատակված է մահտեսի Մեծատուրի որդի Արահանը: «Մեծատուր» արական անձնանունն ըստ Հր. Աճառյանի՝ ունի հայկական ծագում, կազմված է մեծ + տուր բառերից, ինչպես օրինակ՝ Տիրատուր, Աստվածատուր և մեզանում հիշատակվում է դեռևս XIV–XVII դդ.¹¹:

Ուշագրավ է այս և ներքոնշյալ մի քանի հիշատակագրությունների թվագիրը՝ արտահայտված արաբական թվերով, այն դեպքում, երբ թանգարանի համանման այլ իրերի մակագրություններն ավարտվում են Հայոց մեծ թվականով. օրինակ՝ վերոնշյալ պնակը կրում է Հայոց ՌՃՂԸ թվագիրը, որը, ինչպես հայտնի է, վերծանելիս փրկչական ստանալու համար գումարում ենք 551, այսինքն՝ 1198+551=1749: Չնայած իրերի համանմանությանն ու մակագրությունների հայերեն ու հայատառ լինելուն՝ կարծում ենք, որ արաբական թվերի գործածության դեպքում թվագիրը պետք է վերծանել ըստ մահմեդական հիջրայի թվականի, որի դարազուխը համարվում է 622 թ. հուլիսի 16-ը՝ հուլյան տոմարով¹²: Այս երևույթը կարելի է բացատրել ժամանակի քաղաքական պատճառներով, քանի որ XVII–XVIII դդ. Հայաստանը գտնվում էր պարսկա-թուրքական տիրապետության տակ, երբ ի թիվս այլ փոխազդեցությունների (լայնորեն շրջանառվում էին բառեր ու բառաձևեր՝ փոխառված պարսկերենից, արաբերենից ու թուրքերենից)՝ գործածվում էր նաև մահմեդական հիջրայի թվականը:

Նկատենք, որ հայերեն արձանագրությամբ և հիջրայի թվականով սպասքի ու եկեղեցական իրերի բազմաթիվ նմուշներ պահվում են նաև Հայաստանի պատմության թանգարանում: Բերենք մի քանի օրինակ. ծագումով Հառիճավանքից արծաթյա կանթեղի հայերեն մակագրության տարերթիվը արաբական թվերով է. «Յիշատակ է կանթեղս Պուլանտերեան

¹¹ Տե՛ս ՀԱԲ, հ. 9, Երևան, 1946, էջ 308:

¹² Հիջրայի թվականի վերծանության մասին մանրամասն տե՛ս Ա. Գ. Արահանյան. Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 134–138:

Պետրոսին եւ որդուն՝ Մօսէսին, ի դուռն Սուրբ Աստուածածնայ, ՎՂԶ¹³: Հիշատակված է հիջրայի 1262 թ., որը մեր 1845/6 թվականն է: Արաբագիր է նաև պղնձյա մոմակալի պատվանդանի մակագրության թվականը. «Յիշատակ է տէր Յօհանի որդի մահտեսի Ղազարին, ի դուռն Սուրբ Խաչին, ՎՂԿ ին»¹⁴: Այստեղ էլ գործ ունենք հիջրայի 1273 թվականի հետ, որը համարժեք է մեր 1856/7 թվականին: Նման մի ուշագրավ երևույթ պահպանվել է նաև Հրազդանի Ջրառատ թաղամասի Ս. Կարապետ եկեղեցու արևելյան կողմում կանգնեցված Հայոց ՌՀԷ. (1628) թվակիր խաչքարի վրա, մասնավորապես՝ հորիզոնական ձախ խաչաթևի ստորին մասում առկա է պարսկերեն կարճատոտ գրություն, որի վերծանությունը պարզել է, որ կրկնված է խաչքարի հայերեն արձանագրության թվականը՝ ՎՂԿ¹⁵, այսինքն՝ հիջրայի 1037, որ մեր՝ 1627/8 թվականն է: Նշված օրինակները հիմնավոր են դարձնում այն մտտեցումը, որ քննվող մակագրություններում առկա արաբերեն թվագիրը ևս պետք է հաշվել հիջրայի թվականով, այլապես կնշվեր Հայոց մեծ թվականը՝ հայերեն տառերի թվային համարժեքով:

4. Պղնձյա պնակ, Հ⁴ 07. 725, RSz. 141.254, տրամ.՝ 21 սմ, ներսի թեք հարթությունը ոճավորված է բուսական երեք եռանկյունաձև զարդանախշերով, որոնցից երկուսը նաև արձանագիր են: Գրերը՝ երկուական տող, էլնդատառ.



ԽՈՃԱ ԹՈՐ/ՈՍԻ ՈՐԴԻ
Մ[Ա.]Հ[ՏԵՍ]Ի ԽԱՉ/ԵՐ, ՌՄԼԹ. (1790):

Նկ. 5

¹³ Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պր. 1. Հայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխատասիրությամբ Ե. Մուշեղյանի, Երևան, 1964, էջ 81, արձ. 76:

¹⁴ Նույն տեղում, էջ 84, արձ. 87: Արաբագիր է նաև Էջմիածնի թանգարանից բերված արծաթյա հավասարաթև խաչի թվականը. «Յիշատակ է Սուրբ խաչս Մկրտիչ արքեպիսկոպոսին, հօրն՝ Մանուկին, մօրն՝ Ղարիբին, եղբարցն սին Գրիգորին, դուռն Արտողու Սուրբ Յօհաննէսին, թվին ՎՂԳ՝, Եղբօրն Գրիգոր վարդապետին»: Վկայված է հիջրայի 1291, մեր՝ 1873/4 թվականը (տե՛ս նույն տեղում, էջ 83, արձ. 83):

¹⁵ Տե՛ս Գ. Մ ա ր ց ա յ ա ն. Ջրառատի Ս. Կարապետ եկեղեցին. «Հին Հայաստանի մշակույթը», XIII, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2005, էջ 238, արձ. 5:

Իր տեսակում պնակը միակն է ողջ հավաքածուի մեջ: Ըստ մակագրության՝ հիշատակված է խոջա (խոճա), այսինքն՝ վաճառական Թորոսի որդի մահտեսի Խաչերը: «Խոջա» բառն առաջին իմաստով ստուգարանվում է իբրև «մեծ, հասակավոր», իսկ XVI-XVIII դդ. խոջա էին կոչում հատկապես Ջուղայի ու Ագուլիսի հայ վաճառականներին¹⁶: Ծագումով հայկական «Խաչեր» արական անձնանունն ըստ Հր. Աճառյանի՝ գործածական է եղել XIII-XVII դդ: Այն «խաչ» բառի հոգնակին է, կամ «Խաչերես» անձնանվան կրճատ ձևը¹⁷:

5. Պղնձյա անոթ, Հ⁴ր 07. 728, RSz. 146, 252, տրամ.՝ 30 սմ, ունի միատող մակագրություն.




ԱԲԸԱՀԱՄԻ ՈՐԴԻ ՈՀԱՆԻՆ,
ՌՄԾԶ.-ԻՆ (1807):

Նկ. 6

Ըստ կից թերթիկի՝ այն Անատոլիայից, այսինքն՝ Արևմտյան Հայաստանից մեզ հասած պղնձյա անոթ է: Թվականի միավոր «Ձ»-ն փոքր-ինչ կասկածելի է:

6. Պղնձյա պնակ, Հ⁴ր 07. 727, RSz. 144, 247, տրամ.՝ 24 սմ, միատող արձանագրությունը բոլորում է ավստի նստուկը.



† Մ[Ա]Հ[ՏԵՍ]Ի ՓԻՀԿՕՍԵԱՆ
Մ(Ա(Հ(ՏԵՍ(Ի ՅԱՐՈՒԹԻ(Ի(ՆԻ ՈՐԴԻ
ԳԵԻՈՐԳ, ԿՆԻՊ 1241 (1825/6)

Նկ. 7

«Փիհկոսեան» արտաստվոր ազգանունը միզուցե «Փիլիպոսյան» ազգանվան փոխակերպումն է: Նվիրատուն Գևորգն է կամ պնակը կերտվել է ի հիշատակ նրա: Այստեղ նս գործ ունենք հիջրայի թվականի հետ, այն է՝ 1241 թ., որը մեր 1825/6 թվականն է:

7. Պղնձյա պնակ՝ ոճավորված եզրերով, Հ⁴ր 07. 726, RSz. 249, տրամ.՝ 26 սմ, մակագրությունն ամանի հակառակ կողմում, 3 տող, էլնդատառ.

¹⁶ Տե՛ս ՀԲԲ, հ. երկրորդ, Երևան, 1944, էջ 312:

¹⁷ Տե՛ս ՀԱԲ, հ. Բ, Երևան, 1944, էջ 491:



ՏԻՄԻՏԻ ԱՂԱՅԻ ՈՐԴԻՔԻ /
ԵԻԿՕԼԱ ԵԻ ԸՍՏԵՓ/ԱՆ, 1246
(1830/1)

Նկ. 8

8. Պղնձյա պնակ՝ նախորդի նման, Հ^ր 07. 500, RSz. 246, տրամ.՝ 25 սմ, գիրը դարձյալ ամանի հակառակ կողմում, 2 տող, էլնդատառ.



ԵԻԿՕԼԱՅԻ Ո(ՐԴԻ / ՕՉԱՆ,
1249 (1833/4)

Նկ. 9

Այս և վերոնշյալ պնակի մակագրություններն ակնհայտորեն հուշում են, որ հիշատակված անձինք ազգականներ են, ըստ այդմ՝ Նիկոլայի որդի Օհանը վերոհիշյալ Տիմիտրիի թոռն է: Նկատելի է նաև այն, որ իրերն ունեն բազում ընդհանրություններ թե՛ ձևով, թե՛ չափերով, նմանատիպ են անգամ տառաձևերը:

Ստորև հիշատակվող մակագրությունները թվագրված չեն, սակայն, դարձյալ հարազատ են XVIII դարին կամ XIX դարի առաջին կեսին:

9. Պղնձյա պնակ, Հ^ր 07. 503, RSz. 184, տրամ.՝ 32 սմ, ներսի թեք մակերեսին՝ շրջանի մեջ, 3 տող, էլնդատառ.



ԻՕՎԱՆԷՍ / ՈՐԴԻ ԱՆՏԻՐ/ԱՍ:

Նկ. 10

Առաջին հայացքից նախդիր թվացող «Ի»-ն, թերևս, պետք է ընդունել անձնանվան մաս: Հիշատակված է նաև «Անտիրաս» արական անձնանունը: Այլուստ նման անձնանվան գործածության վերաբերյալ մեր պրպտումներն ամուլ են. միգուցե «Անդրեաս, Անդրիաս» անձնանվան փոխակերպված տարբերակն է:

10. Պղնձյա պնակ, Հ^ր 07. 504, RSz. 185, տրամ.՝ 35 սմ, ներսի թեք մակերեսին՝ շրջանի մեջ, 3 տող, էլնդատառ.



Մ[Ա]Հ[ՏԵՍ]Ի ՄԱՐ/ԿՈՍԻ ՈՐԴԻ / ՍԱՄԷԹ:

Նկ. 11


«Մամեթ» արական անձնանվան այլ հիշատակումներ մեզ դարձյալ հայտնի չեն: Հր. Աճառյանը հիշատակում է «Մամոտ» արական անձնանունը, որն ըստ նրա՝ ծագում է հայկական «սամետ»¹⁸, «սամետէ», «սամետի», «սամոտիք» բառերից¹⁹:

11. Պղնձյա պնակ, Հ^մ 07. 510, RSz. 182, տրամ.՝ 23 սմ, ներսից առկա է միատող հակիրճ գրություն՝ անվարժ ձեռքով, միատող ելնդատատ մակագրություն կա նաև պնակի հակառակ կողմում:



ԳԷՔՈՐ ՈՂԼՈ ՈՒՀԱՆԷՍ:

ա



ՏՐ ՈՎԱԿԵՍ

բ

Նկ. 12 ա, բ

Առաջին մակագրության մեջ հիշատակված է Օհանեսի (Ուհանէս) որդի (թրք.՝ օղո) Գրիգորը (Գէքոր), իսկ երկրորդում վկայված է, թերևս, հոգևորական տեր Հովակիմի (Ովակեմ) անունը: Անշուշտ, մակագրությունները նաև որոշակի տեղեկություններ են հաղորդում ժամանակի բարբառային ձևերի, կենցաղային խոսվածքի, փոխառյալ բառերի ու լեզվական այլ առանձնահատկությունների վերաբերյալ, որի վկայությունն են նաև հիշյալ գրությունները:

12. Պղնձյա պնակ (դեղնավուն փայլով), Հ^մ 07. 507, RSz. 188, տրամ.՝ 30 սմ, ամանի հակառակ կողմում՝ թեք մակերեսին, առկա է ելնդատատ երկտող մակագրություն:



ՄԻՆԱՍԻ ՈՐԴԻ / ՍԱՐՈՒԽԱՆ:

Նկ. 13

13. Պղնձյա պնակ, Հ^մ 07. 511, RSz. 192, տրամ.՝ 21 սմ, ամանի հակառակ կողմում՝ թեք մակերեսին, առկա է ելնդատատ միատող մակագրություն:



ՆԵՐՍԷՍ

Նկ. 14

¹⁸ Մամետը կամ սամոտին սամիքը (եզանը լծելու համար փայտե երկու ձողիկ, որ ներքնից կապվում են սամոտիքով) կապելու թելն է, մեծ մասամբ՝ կաշվից (տե՛ս ՀԲԲ, հ. չորրորդ, Երևան, 1945, էջ 179):

¹⁹ Տե՛ս ՀԱԲ, հ. 7, էջ 380:

14. Պղնձյա սափոր, Հ^ր 07. 723, RSz. 142, 253, բարձ.՝ 35 սմ, այն աչքի է ընկնում շեշտված եռամասնությամբ՝ վիզ, փոր և ներքնամաս, ինչպես նաև նուրբ փորագրարվեստով (թռչուններ, բուսական զարդանախշեր): Փորի ուռուցիկ մակերեսին փակագրված է «ՊՈՂՈՍ» անձնանունը, իսկ միատող բուն արձանագրությունը գոտևորում է ողջ ուռուցիկ փորը:

ՅԻՇԱՏԱԿ ՕՓԻՒՆ ԳԻԻՂԻՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ, ԱՓՐԱՀԱՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ:

ՅԻՇԱՏԱԿ ՕՓԻՒՆ ԳԻԻՂԻՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ, ԱՓՐԱՀԱՍ ՄԵԼՔՈՆԵԱՆ:



ՊՈՂՈՍ

Նկ. 15 ա, բ, գ

Հիշատակագրության մեջ վկայված է Արևմտյան Հայաստանի Դիարբեքի Նահանգի ու համանուն գավառի, Լճեի գավառակի Օփում (Օփիւն) գյուղի Ս. Հակոբ եկեղեցին²⁰: Օփումը, հայտնի նաև՝ Ափում, Օպում, Օֆում, Ֆում անվանաձևերով, գավառակի ամենամեծ հայաբնակ գյուղն է եղել, որը նախորդ դարասկզբին ունեցել է շուրջ 120 տուն հայ բնակիչ: Գյուղն ամայացել ու ավերվել է Մեծ եղեռնի տարիներին: Տեղանվանական բառարանում նշվում է, որ ենթադրելի է, թե այստեղ է գտնվել Մեծ Հայքի Աղձնիք աշխարհի Նփրկերտ գավառի Ափում (Օպում) ամրոցը²¹:

²⁰ Տե՛ս Ստ. Մե լի ք - Բ ա խ շ յ ա ն. Հայոց պաշտամունքային վայրեր, Երևան, 2009, էջ 235:

²¹ Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ստ. Տ. Մե լի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 507:

Օփում բնակավայրը, ըստ էության, նույնանուն է ուրարտական Ուպումու (*URU/KUR* (U)p(p)um(m)a/e) տեղանվան հետ, որը նախորդ ուսումնասիրողների տեսակետների հիման վրա հիշատակում է ուրարտագետ Ն. Հարությունյանը. «...Ատրեստանյան աղբյուրներում վկայված Շուպրիայի շրջանի Ուպպումու-Ուպպումե-Բպպումե-Պումու քաղաքի անվան հիմքում ակնհայտորեն նկատի է առնված Բլիջիայից 3 կմ հարավ՝ Սասնո լեռներում գտնվող բյուզանդական *Αφοσμών* և ժամանակակից Ֆում բնակավայրը (Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 209):

Ժամանակագրորեն XIX դարավերջով թվագրվող սափորը նվիրաբերվել է հիշյալ եկեղեցուն՝ ունի Աբրահամ Մելքոնյանի կողմից: Ինչ վերաբերում է փակագրին, ապա այն, ամենայն հավանականությամբ, պատրաստող վարպետի անունն է: Նկատենք, որ, ի տարբերություն վիմագրերի, մակագրություններում նման երևույթ սակավ է հանդիպում²²:

Թանգարանի հավաքածուի մեջ աչքի են ընկնում նաև մետաղյա գոտիները: Դրանցից է XIX դարավերջով թվագրվող ոսկեպատ արծաթից ու արուրից կերտված, հայկական պատմական հուշարձանների տեսարաններով գոտին (87 x 4 սմ) (Նկ. 16): Ցավոք, անհայտ է վարպետի անունը: Գոտին հարդարված է ժանյակահյուս մանր հատիկներով, իսկ պատկերազրույթյան բոլոր տեսարաններում շեշտված են հատկապես եկեղեցիները, որոնց տակ երբեմն կան նաև գրություններ, ինչպես օրինակ՝ «ԷՋՄԻԱԾԻՆ», «ՎԱՐԱԳ», «ԱՂԹԱՄԱՐ» և այլն: Բուդապեշտի պատմության թանգարանի և տեղի ազգային գրադարանի՝ 2013 թ. ցուցահանդեսին նվիրված հոդվածների ժողովածուի լուսանկարների ու ծանոթագրությունների աղյուսակում տեղ է գտել նաև հիշյալ գոտու վերաբերյալ տեղեկություն, որ տեղից էլ վերցրել ենք վերն ասվածը²³:

15. Մետաղյա գոտի. կարելի է թվագրել նախորդ դարի առաջին կեսով: Հարդարված է կենդանակերպի համաստեղության 12 խորհրդանիշների ձուլվածո պատկերներով: Կենտրոնի շրջան-մեղալիոնի մեջ ամփոփված է Չվարթնոցի տաճարի արևի ժամացույցի VII դարի հայտնի արձանազրույթյան կրկնօրինակը: Ժամային Ա.-ԺԲ. նշանագրերի վերնամասում հետևյալ գրությունն է.



ԱՂԱԹԵՍ
ՅԵՆ ԱՌ ՏՐ ԱՄԵՆ
ԱՅՆ ՍՈՒՐԲ Ի ԺԱՄ
ԸՆԴՈՒՆԵԼԻ:

Նկ. 17

Ի թիվս թանգարանի նշյալ իրերի՝ պակաս ուշագրավ չեն նաև այլալեզու մակագրություններ ունեցող առարկաները. բերենք երկու օրինակ:

²² Փակագրերը հաճախադեպ են հատկապես վիմագրության մեջ: Բնավ չհետապնդելով տեղի խնայողության նպատակ՝ փակագրվել են հիմնականում հոգևոր առաջնորդների, նվիրատուների, մեկենասների, վարպետների անունները: Վիմագրերում փակագրության երևույթն առանձին քննության է ենթարկել վիմագրագետ Ս. Սաղումյանը (տե՛ս Ս. Սաղումյան. Փակագրությունը հայ վիմագրության մեջ. - ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, - 3, էջ 73-91):

²³ Far Away from Mount Ararat. Armenian Culture in the Carpathian Basin, Joint Exhibition of the Budapest History Museum and the National Széchényi Library 5 April to 15 September, 2013, p. 114, pic. 1.5.

16. Մեդայիոն, տրամ.՝ մոտ 4 սմ, երկկողմանի օսմաներեն գրությամբ.
1334

حریت مساوات اخوت عدالت

Վերծանությունը. «Ոսկի, 1334 թ. (1915/6 թ.)», հակառակ կողմում՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն, արդարություն» (Նկ. 18 ա, բ):

Հիշատակված է 1789–1794 թթ. տեղի ունեցած ֆրանսիական մեծ հեղափոխության կարգախոսը, որը ձևակերպվել է «ֆրանսիացի լուսավորիչների՝ մարդու «բնական իրավունքների» տեսության հիման վրա»²⁴: Այն հետագայում որդեգրել է աղբյուրական մուսավաթական կուսակցությունը:

17. Պղնձյա պնակ, Հ^Կ 07. 730, տրամ.՝ 12 սմ, նրբարվեստ բուսական զարդանախշերով, ավսեի ներսում և հակառակ կողմում՝ նստուկին, առկա են պարսկերեն մակագրություններ.

رضا شاه پهلوی شاهنشاه ایران 5 ریاال 1311 (1933)

پنج ریاال

Վերծանությունը. «Իրանի շահանշահ Ռեզա շահ Փահլավի, 5 ռիալ», հակառակ կողմում՝ «1311 (1933), հինգ ռիալ»²⁵ (Նկ. 19 ա, բ):

Մակագրության մեջ հիշատակված է Իրանի բավական ազդեցիկ Ռեզա խանը (1878–1944), որին 1925 թ. դեկտեմբերի 12-ին սահմանադիր ժողովը հռչակեց Իրանի շահ՝ Ռեզա շահ Փեհլևի (Փահլավի) գահակալական անվամբ:

Անփոփելով Բուդապեշտի Ս. Աստվածածին աղոթարան-եկեղեցու վերնահարկում ստեղծված թանգարանի սպասքի մակագրություններին նվիրված մեր հաղորդումը՝ արձանագրենք.

ա) Մակագրությունների մեծ մասը դրվագված են երկաթագիր կոչվող տառատեսակներով, երբեմն էլ փորագրված են անվարժ ձեռքով: Տեղի խնայողության նպատակով կիրառվել է կցագրություն, այսինքն՝ սղման այն ձևը, երբ մի քանի տառերի անհրաժեշտ ստեղծները կապվում ու գործածվում են իբրև մեկ տառ՝ հաճախ դուրս թողնելով մեկ կամ մի քանի գրեր. օրինակ՝ ՄԱՀՏԵՄԻ բառը վկայված է ՄԱՀԻ ձևով (արձ. 1–3), ընդ որում՝ ՄԱ-ն կցագիր: Հանդիպում է նաև առանց ՄԱ կցագրի՝ ՄՀԻ ձևով (արձ. 4, 6, 10): Վերծանության ժամանակ հատուկ պայմանական նշաններով վերականգնվել են առկա բոլոր սղումները: Քննվող մակագրություններում առկա կցագրերից նշելի են ՈԼԴԻ բառում – ՈԼ և ԴԻ, ԹՎԻՆ – ԹՎ, ԱԲԸԻՀԱՄ – ԱՄ, ՆԻԿՕԼԱ – ՆԻ, ՕՎԱՆԷՄ – ՆԷ, ՄԱԼՈԻԽԱՆ – ԱԼ և այլն: Հապավված են ՍՈԻԸԸ, ՏԷԸ բառերը, որոնց վրա դրված է «պատիվ» նշան կամ հորիզոնական զծիկ (արձ. 2, 11, 14, 15):

²⁴ ՀԱՀ, հ. 1, Երևան, 1974, էջ 100:

²⁵ Պարսկերեն մակագրությունները վերծանել է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արարատառ ձեռագրերի նկարագրության բաժնի ավագ գիտաշխատող Ք. Կոստիկյանը. հայտնում ենք մեր շնորհակալությունը:

բ) Ներկայացված պղնձյա պնակները, սափորն ու մետաղյա գոտիներն ուշագրավ են պատրաստման, զարդարվեստի և մի շարք այլ առանձնահատկությունների ուսումնասիրման տեսանկյունից: Նրբարվեստ զարդանախշերով աչքի են ընկնում հատկապես թիվ 4 և 14 արձանագրությունները կրող իրերը: Վերջինս յուրօրինակ է նաև պատրաստող վարպետի անվան փակագրի առկայությամբ:

գ) Մակագրությունների ուսումնասիրությունը մեծապես կարևորվում է նաև հատկանվանագիտական տեսանկյունից, որ տվյալ դեպքում վերաբերում է հիշատակվող անձնանուններին. դրանցից շատերը նախկինում վերագրվել են բուն միջնադարին կամ XVI–XVII դդ., մինչդեռ ակնհայտ է, որ դրանք վկայված են նաև հետագա դարերում, մինչև անգամ՝ նոր շրջանում:

դ) Ինչ վերաբերում է հայերեն ու հայաստան գրությունների թվագրման՝ արաբական թվերով արտահայտման եղանակին, ապա ժամանակաշրջանի քաղաքական պատճառներով պայմանավորված՝ թանգարանային իրերի մակագրություններից հայտնի հիջրայի թվականի այսօրինակ գործածության վկայագրերի թիվն ավելացավ ևս չորսով (արձ. 3, 6, 7, 8):

Եվ, վերջապես, պետք է փաստել, որ ներկայացված նյութն իբրև հուն-գարահայ գաղութի պատմության միասնիկ, հայրենիքից հեռու իր մեջ է խտացնում մեր դարավոր մշակույթը, հայ արվեստն ու հայեցի ոգին

НАДПИСИ НА ПРЕДМЕТАХ МУЗЕЙНОЙ УТВАРИ В ЦЕРКВИ-МОЛЕЛЬНЕ СВ. БОГОРОДИЦЫ В БУДАПЕШТЕ

АРСЕН АРУТЮНЯН, АРУТЮН ХУДАНЯН

Резюме

Музейная коллекция церкви-молебни Св. Богородицы в Будапеште в основном содержит множество предметов, изготовленных из меди и глины для церковных нужд и домашнего обихода. Более десятка из них имеют надписи, краткие памятные записи, а зачастую также датированы (некоторые из них, имея надписи на армянском языке и армянскими буквами, датированы по мусульманской хиджре), а некоторые кроме надписей украшены различными орнаментами. Общий анализ надписей позволяет констатировать, что большинство из них гравированы шрифтом, известным как «железные буквы» («еркатагир»), а иногда гравировка сделана неумелой рукой.

В целях экономии места были применены и сокращенные надписи, в частности, лигатур, когда элементы нескольких букв объединяются в одну букву, часто опуская одну или несколько из них. Эти надписи имеют важное значение как с точки зрения ономастики, что в данном случае касается исследования различных имен, так и с точки зрения диалектов и других особенностей языка. До сих пор этому материалу не было уделено должного внимания, несмотря на то, что его исследование имеет существенное значение для изучения истории армянских общин в мире. Будучи частицей истории армянской общины в Венгрии, представленная коллекция аккумуляровала армянское искусство, многовековую культуру и армянский дух.

THE INSCRIPTIONS OF THE MUSEUM UTENSILS OF ST. ASTVATSATSIN
CHURCH IN BUDAPEST

ARSEN HARUTYUNYAN, HARUTYUN KHUDANYAN

S u m m a r y

The museum collection contains mainly various church and household objects made of copper and clay. More than a dozen of these items are inscribed, have brief commemorative inscriptions and are often dated (some of them are dated by Muslim Hijrah though inscribed in Armenian), besides the superscriptions some of them have ornaments, too. The general observation of the superscriptions lets us assert that most of the utensils are chased by the letter type of “yerkatagir” (iron writing), sometimes carved by an unskillful hand. Ligature was applied for the purpose of economizing distance, namely the very shortened form when the necessary dactyls of several letters are tied together and used as one letter very often omitting either one or several letters. The writings are important not only from the perspective of the study of onomastics, here personal ones, but also from the point of linguistic and dialect peculiarities. Such kind of observation of the subject, has never been properly touched upon since today, has an essential significance for the study of the history of the Armenian colonies. Being a small part of the history of the Armenian colony of Hungary the presented collection condenses the Armenian art and archaic culture as well as the Armenian spirit within itself.



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 4



ա



բ

Նկ. 3



Նկ. 5



Նկ. 7



Նկ. 6



Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11



Ս

Նկ. 12



Բ



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15 Ս



Բ



Դ



Նկ. 16



Նկ. 17



Ս

Նկ. 18



Բ



Ս

Նկ. 19



Բ